Գնման ընդհանուր ծանուցում

Երկիր/Վայր ՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան

Ծրագիր՝ Երևանի էներգաարդյունավետության 2-րդ ծրագիր

Ֆինանսավորման հնարավոր աղբյուր՝ Եվրոպական ներդրումային բանկ և Եվրոպական միության ֆինանսական գործիք հանդիսացող Հարևանության ներդրումային հարթակ

Գնման տեսակ՝ աշխատանքներ և ծառայություններ

Հրապարակման ամսաթիվ ՝ 2023 թվական, Մայիսի 5

ՀՀ Կառավարությունը դիմել է Եվրոպական ներդրումային բանկին և Եվրոպական միության ֆինանսական գործիք հանդիսացող Հարևանության ներդրումային հարթակին՝ Երևանի էներգաարդյունավետության 2-րդ ծրագրի իրականացման համար ֆինանսավորում ստանալու համար և, եթե ֆինանսավորումը հաստատվի՝ մտադիր է վարկի և դրամաշնորհի հասույթի մի մասն ուղղել սույն ծրագրի շրջանակներում ձեռքբերվելիք աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների համար: Ծրագիրը կիրականացվի Երևանի քաղաքապետարանի կողմից:

Ծրագիրն իր մեջ կներառի հետևյալ բաղադրիչները.

(i) Երևան քաղաքում գտնվող մանկապարտեզների սեյսմիկ արդիականացում, էներգաարդյունավետության բարելավում և վերակառուցում;
(ii) Երևան քաղաքում գտնվող պոլիկլինիկաների սեյսմիկ արդիականացում, էներգաարդյունավետության բարելավում և վերակառուցում;
(iii) ինժեներական և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում;
(iv) պոլիկլինիկաների նախագծման և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում:

Բանկի ֆինանսավորման ապահովման դեպքում, վարկի և դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պայմանագրերը կառաջնորդվեն Եվրոպական ներդրումային բանկի գնումների ուղեցույցի պահանջներին համապատասխան: Վարկի և դրամաշնորհի միջոցները չեն օգտագործվի անձանց կամ կազմակերպություններին որևէ վճարման կամ ապրանքների ներմուծման նպատակով, եթե նման վճարումը կամ ներմուծումը արգելվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 7-րդ գլխի և Պատվիրատու երկրների պաշտոնական կարգավորման մասին օրենքի համաձայն:

Վարկի և դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող մրցույթները բաց են ցանկացած երկրի ընկերությունների համար:

Վերոնշյալ պայմանագրի/երի համար մրցույթները նախատեսվում է մեկնարկել 2023 թվականի 2-րդ եռամսյակում:

Միջազգային բաց մրցակցային գնումների ենթակա պայմանագրերի հատուկ գնումների ծանուցումները հասանելի դառնալուն պես կհրապարակվեն Եվրոպական միության պաշտոնական ամսագրում (OJEU), SUDIP Երևանի և Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքերում և «Հայաստանի Հանրապետություն» թերթում:

Հետաքրքրված հայտատուները, կապալառուները և խորհրդատուները կարող են դիմել.

Կոնտակտային անձ՝ պարոն Տիգրան Բեգլարյան, Գնումների մասնագետ

Գնումներն իրականացնող կազմակերպություն՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետարան

Հասցե՝ Ք. Երևան, Բուզանդ փողոց 1/3, 5-րդ հարկ, 508 սենյակ

Հեռախոսահամար՝ +374 10 52 09 73

Էլեկտրոնային հասցե՝ ipiu@yerevan.am և tigran.beglaryan@yerevan.am